## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-Ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից, հիմք է << Բուսաբուծության աջակցության ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշումը, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի <<Նաիրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 275-Ն որոշմամբ հաստատված N 1, N 2, N 3 և N 6 հավելվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին որոշման նախագիծը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-Ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի <<Նաիրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 275-Ն որոշմամբ հաստատված N 1, N 2, N 3 և N 6 հավելվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2024 թվականի բյուջեում ենթադրում է 1498680 դրամի եկամուտների և ծախսերի ավելացում: